# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5199-Ա « 19 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման ծրագրի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և գույքի ձեռքբերում» ծրագրով նախատեսված միջոցները.

1. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով նախատեսված գումարների շրջանակում Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման գործընթացի արդյունքում «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/161-1 և ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/161-2» ծածկագրերով կնքված պայմանագրերով ձեռքբերված, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բժշկական սարքավորումները /այսուհետ՝ գույք/ տրամադրել Երևանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններին՝ անհատույց օգտագործման իրավունքով, 10 /տասը/ տարի ժամկետով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, հավելվածում նշված Երևանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ 10 /տասը/ տարի ժամկետով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և հավելվածում ընդգրկված փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
19.12.2025թ.
հ. 5199-Ա որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

*ՀՀ դրամ*

| ՀՀ | Բուժհիմնարկի անվանումը | Բժշկական սարքավորման անվանումը | Քանակը | Միավորի գինը | Ընդամենը գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ | Վիրահատական սեղան | 1 | 3,184,500 | 3,184,500 |
| 2 | «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ | Վիրահատական սեղան | 1 | 3,184,500 | 3,184,500 |
| 3 | «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ | Անզգայացման սարք | 1 | 9,150,000 | 9,150,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **3** | | **15,519,000** |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**